ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻՑ ՀԱՆԵԼ ՓԱՍՏԱԲԱՆԻ ԵՎ ԴԱՏԱԽԱԶԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԴԱՏԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

16.01.2018 10:53

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը դիմել է ՀՀ Ազգային ժողովի նախագահին և ՀՀ արդարադատության նախարարին առաջարկելով՝

- ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի նախագծից (այսուհետ՝ Նախագիծ) փաստաբանների և դատախազների նկատմամբ տուգանք կիրառելու մասին կանոնը հանել, այդ հարցի լուծման հնարավորությունը վերապահելով դատավարական օրենսգրքերին.

- այդ կապակցությամբ Նախագծի 74-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«*1. Գործի քննությանը մասնակցող դատախազի և գործի քննությանը որպես կողմի ներկայացուցիչ կամ պաշտպան մասնակցող փաստաբանի նկատմամբ չի կիրառվում դատական նիստերի դահլիճից հեռացում և դատական տուգանք դատական սանկցիաները, եթե այլ բան նախատեսված չէ դատավարական օրենսգրքերով:*»:

ՀՀ փաստաբանների պալատն, ի թիվս այլ փաստարկների, առաջարկը ներկայացրել է՝

- հաշվի առնելով, որ այս կենսական նշանակություն ունեցող հարցի նման հրատապ ընդունումը կարող է բերել անկանխատեսելի հետևանքների, իսկ ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված Նախագծի վերաբերյալ այս կարճ ժամանակահատվածում արդյունավետ քննարկում դժվար է կազմակերպել,

- նկատի ունենալով այն, որ Նախագծի 173-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն՝ *դատական օրենսգրքի 12-րդ գլխի կանոնները փաստաբանների և դատախազների նկատմամբ* ***<u>կիրառվում են 2019 թվականի հունվարի 1-ից</u>***, հետևաբար ակնհայտ է դառնում այս հարցի կարգավորման հրատապ անհրաժեշտության բացակայությունը,

- ի գիտություն ընդունելով այն հանգամանքը, որ դատավարական օրենսգրքերի ընդունման ժամանակ ՀՀ փաստաբանների պալատը հնարավորություն կունենա ներկայացնել իր փաստարկները՝ առավել բազմակողմանի, ինչպես նաև՝ միջազգային հեղինակավոր կառույցի դիրքորոշումը այս հարցի կապակցությամբ:

ՀՀ փաստաբանների պալատն այս հարցով դիմել է նաև Եվրոպայի փաստաբանների պալատների և միությունների խորհրդին (CCBE)՝ վերջինիս դիրքորոշումը ստանալու նպատակով:

ԲԵՌՆԵԼ ԱՌԱՋԱՐԿԸ

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

մամուլի խոսնակ՝ Ծովինար Խաչատրյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })